ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0025, Մխիթար Հերացի 12 Հեռ. (+ 374 12) 80-80-83
Էլ.փոստ/ E-mail info@ncdc.am

20 01 2023 N ԱՎ/01/08.4/28-23

«ԼԵՅԿՈ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Գ.ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի /մասնակի/ լուծելու մասին

ԱՆ «ՀՎԿ Ազգային Կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Լեյկո» ՍՊ ընկերության միջև 2022թ. օգոստոսի 1-ին կնքված № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2022-04-01» պայմանագրի շրջանակներում մատակարարը պարտավորվել էր մատակարարել (չ/բ № 11՝ Պտուտակավոր կափարիչով պլաստիկե տարա՝ հեղուկ նմուշների համար 100-120 մլ և չ/բ № 12՝ Նմուշառման մանրէազերծ տարաներ գդալիկով, անհատական փաթեթավորմամբ), սակայն «Լեյկո» ՍՊ ընկերության կողմից նոյեմբերի 10-ին դուրս գրված Ա 3233701200 հարկային հաշվով մատակարարված ապրանքները չեն համապատասխանել պայմանագրի հավելված 1-ում նշված տեխնիկական բնութագրի պահանջներին և «ՀՎԿ Ազգային Կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրվել է «պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ բացասական եզրակացություն», բազմիցս բանավոր, ինչպես նաև առ 21.12.2022թ. թիվ ԱՎ/01/08.4/654-22 գրությամբ Ձեզ առաջարկվել է սեղմ ժամկետում փոխարինել նշված ապրանքը և մատակարարել տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանք, ինչը «Լեյկո» ՍՊ ընկերության կողմից չի կատարվել: Ուստի խախտվել է Պայմանագրի 1.1 կետի պահանջը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը, ինչպես նաև 2.1.7.1 կետի ա) ենթակետը՝ հայտնում եմ, որ ԱՆ «ՀՎԿ Ազգային Կենտրոն» ՊՈԱԿ-ը միակողմանի մասնակի (վերը նշված չափաբաժինների մասով՝ 44 000 ՀՀ դրամ գումարի չափով) լուծում է № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2022-04-01» պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի մասնակի լուծված՝ տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի

պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման գումարը՝ համապատասխանաբար՝ 4 400 / չորս հազար չորս հարյուր / ՀՀ դրամ և 6 600 /վեց հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

-մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից համապատասխանաբար՝ 4 400 և 6 600 ՀՀ դրամ գանձելու նպատակով:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ սույն ծանուցումը հրապարակելուց 5 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության № 900005028106 հաշվեհամարին անհրաժեշտ է փոխանցել Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը՝ 330 / երեք հարյուր երեսուն / ՀՀ դրամ և տուգանքը՝ 220 / երկու հարյուր քսան / ՀՀ դրամ, որի

ընդհանուր գումարը կազմում է 550 / հինգ հարյուր հիսուն / ՀՀ դրամ: Նշված ժամկետում գանձման ենթակա գումարները Ձեր կողմից վճարելու և վճարման կտրոնների բնօրինակները «ՀՎԿ Ազգային Կենտրոն» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսագիտական բաժին / ք.Երևան, Հերացի 12 / ներկայացնելու դեպքում, Ձեր կազմակերպությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՏԱՎԱԶԴ ՎԱՆՅԱՆ

Կատարող՝ Սիրանուշ Պապիկյան
ԱՆ «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
Հեռ. 012-80-80-83 (6014)